ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 177.1/2018-Լ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ՄՇԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.09.2018թ. ք. Երևան

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի՝ «Որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները և գրավոր առաջադրանքների տարբերակների քանակը, որակավորման գրավոր քննության հարցերի մշակման կարգը, որակավորման գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը, գնահատման հանձնաժողովի աշխատանքերը ստուգելու և գնահատելու կարգը, գնահատման սանդղակը, որակավորման գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը և որակավորման գրավոր քննության արդյունքների ստուգաթերթի ձևը սահմանելու մասին» 2018 թվականի օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-91 որոշման հավելված 2-ի 10-րդ կետը, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-38-Ո-102 որոշումը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332.4-րդ հոդվածը և ղեկավարվելով Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով

Հրամայում եմ

1. Հաստատել «Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման գրավոր քննության հարցեր մշակող անձանց վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանման և գրավոր քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու վերաբերյալ» կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված 1
Ռեկտորի 20.09.2018թ.
թիվ 177.1/2018-Լ հրամանի
_____Ս.Առաքելյան

ԿԱՐԳ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ՄՇԱԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սույն կարգը (այսուհետ նաև՝ Կարգ) կարգավորում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-38-Ո-102 որոշման հիման վրա Արդարադատության ակադեմիայի Ռեկտորի կողմից դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման գրավոր քննության հարցերը մշակողի ընտրության, վերջինիս վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության պահպանման և դատավորների որակավորման գրավոր քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին ծանուցման հետ կապված հարցերը:

2. Ռեկտորը դատավորների որակավորման քննության հարցերը մշակողի ընտրությունն իրականացնում է իր հայեցողությամբ՝ բացառելով գործընթացին երրորդ անձանց մասնակցությունն ու քննության հարցերը մշակողի վերաբերյալ տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալը:

3. Ռեկտորը պարտավոր է դատավորների որակավորման քննության հարցերը մշակողին ծանուցել դատավորների որակավորման քննության հարցերի և դրանց պատասխանների բովանդակությունը գաղտնի պահելու պարտականության վերաբերյալ և նախազգուշացնել դատավորների որակավորման քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Ծանուցման ձևը հաստատվում է սույն կարգի Ձև 1-ով:

4. Կարգի 3-րդ կետով նախատեսված ծանուցումները պահվում են Ռեկտորի մոտ՝ երրորդ անձանց, ներառյալ Արդարադատության ակադեմիայի աշխատակիցների համար ոչ հասանելի վայրում:

5. Որակավորման քննության անցկացման համար մշակված հարցերը մինչև քննության օրը պահվում են Ռեկտորի մոտ՝ երրորդ անձանց ոչ հասանելի վայրում, իսկ քննության օրը առանձին-առանձին ծրարավորված ու փակված (զմռսված) վիճակում և ծրարների վրա կատարված անհրաժեշտ նշումներով քննասենյակում հանձնվում են Դատական դեպարտամենտի՝ ԲԴԽ կողմից լիազորված ներկայացուցչին: Քննական հարցերի թղթային տարբերակների հետ համապատասխան հարցերը պարունակող ծրարների մեջ Ռեկտորը Լիազոր ներկայացուցչին է հանձնում դրանց էլեկտրոնային կրիչները:

6. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 20-ի թիվ ԲԴԽ-38-Ո-102 որոշումը, Արդարադատության ակադեմիայի ռեկտորի կողմից քննական հարցեր մշակելու համար ընտրված մասնագետների վերաբերյալ տվյալները չեն կարող հրապարակվել կամ որևէ այլ եղանակով հասանելի դարձվել երրորդ անձանց, ներառյալ Արդարադատության ակադեմիայի աշխատակիցներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է կազմակերպել որակավորման գրավոր քննության հարցեր մշակող անձանց վարձատրությունը:

Ձև 1

Ռեկտորի 20.09.2018թ.
թիվ 177.1/2018-Լ հրամանի
Հավելված 1-ի

_____Ս.Առաքելյան

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Դատավորների որակավորման քննության կամ մասնագիտական պատրաստման քննությունների հարցերի գաղտնիությունը խախտելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու մասին

«Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ *գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն: Գրավոր քննության հարցերը մշակողը պարտավոր է գաղտնի պահել գրավոր քննության հարցերը, պատասխանները, ինչպես նաև որևէ այլ ձևով չնպաստել հավակնորդի կողմից գրավոր քննության հարցերին պատասխանելուն:*

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 332.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատավորների որակավորման քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է անձի կողմից իր պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:*

Ի կատարումն Հայաստան Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի՝ 2018 թվականի օգոստոսի 23-ի թիվ ԲԴԽ-34-Ո-91 որոշման Հավելված 2-ի 10-րդ կետի պահանջի, ինչպես նաև ի հավաստումն դատավորների որակավորման գրավոր քննության հարցերի գաղտնիությունը դիտավորությամբ խախտելու համար քրեական պատասխանատվության մասին ծանուցվելու մասին,

ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՄ

_____

մասնագետի անուն ազգանուն ստորագրություն

«___»_____2018թ.